

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԳԱՎԱՌ – 2021

Հաստատված է ԳՊՀ գիտական խորհրդի 2021թ. մարտի 20-ի թիվ 3 նիստում

Ռեկտոր

Ռ. Հակոբյան



Սույն ձեռնարկը բովանդակում է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան, ԳՊՀ կամ բուհ) կրթության որակի ապահովման, կրթական միջավայրի բարելավման սկզբունքներն ու կառուցակարգերը: Այն մշակված է Համալսարանի գործունեության յուրաքանչյուր ոլորտ ուսումնասիրելու և բազմակողմանի վերլուծելու արդյունքում: Որակի ապահովման քաղաքականությունը Համալսարանի զարգացման ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է՝ ուղղված Համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) և Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակի ապահովմանը և բարելավմանը: Որակի ապահովման ձեռնարկը բխում է ԳՊՀ որակի ապահովման քաղաքականությունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ I. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	4
1.1. Որակի սահմանումը	4
1.2. Որակի ապահովման համակարգը	5
1.3. Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները	6
1.4. Որակի ներքին ապահովում	8
1.5. Որակի արտաքին գնահատում	10
ԳԼՈՒԽ II. ԳՊՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	13
2.1. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակ.....	13
2.2. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները....	13
2.3. ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները և դրանց գործառույթները	17
ԳԼՈՒԽ III. ԳՊՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	22
3.1. ԳՊՀ որակի ներքին ապահովման ընթացակարգ	22
3.2. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, գնահատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում	24
3.3. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին	28
3.4. Ուսանողների ուսումնառության գնահատում	29
3.5. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովում	30
3. 6. Տեղեկատվական համակարգեր.....	32
3.7. Հրապարակայնություն	33
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	35
ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	81
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	83

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու կարևոր իրավունքներից է կրթություն, այդ թվում՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամն իրականացնում է բարձրագույն կրթական ծրագրեր՝ կարևորելով կրթության որակի ապահովումը, ուստի շարունակական միջոցներ է ձեռնարկում՝ իր կողմից իրականացվող բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերը եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: ԳՊՀ-ն 2006 թվականից ներգրավվել է Բոլոնյան գործընթացում:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի 2017 թվականի հունիսի 15-ի թիվ 22 որոշմամբ ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրման արտոնագիր (Վկայական N 19, ԻՀ N23, 21.08.2017):

2017 թվականին հաստատվել է ԳՊՀ զարգացման հնգամյա (2017-2022թթ.) ռազմավարական ծրագիրը, որը սահմանում է բուհի առաքելությունը, գործունեության հիմնական սկզբունքներն ու գերակա ուղղությունները:

ԳԼՈՒԽ I. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1.1. Որակի սահմանումը.

Բարձրագույն կրթության համակարգի ներքին և արտաքին շահառուներն ու շահակիցները (դիմորդներ, ուսանողներ, դասախոսներ, ծնողներ, գործատուներ և այլն) կարող են կրթության որակը բնորոշել տարբեր սահմանումներով: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԱԿ) ընդունել է որակի հետևյալ սահմանումը՝ **որակը համապատասխանությունն է հայտարարված նպատակին**¹: Այսինքն՝ բուհը սահմանում է իր նպատակները, այնուհետ որոշում է, թե որքանով է իր կողմից մատուցվող կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում իր իսկ սահմանած նպատակներին: Նման սահմանումը թույլ է տալիս բուհին լինել ազատ, իր որդեգրած առաքելությանը համապատասխան ձևակերպել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով էլ կգնահատվի և կներկայացվի որակը: Կրթության որակն առաջին հերթին բուհի կողմից սահմանված նպատակների համարժեքությունն է հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված, ինչպես նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում /ԵԲԿՏ/ ընդունված բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչներին ու առաջնահերթություններին:

Կրթության ոլորտում որակի ապահովումը նպատակաուղղված է որակի պահպանմանն ու բարձրացմանը հետևյալ ոլորտներում՝ ուսուցում և ուսումնառություն, գիտական հետազոտություններ, կրթական ծառայությունների մատուցում հասարակությանը, կադրերի հավաքագրում և այլն: Կրթության որակը սերտորեն կապված է դասավանդման և ուսումնառության արդյունավետության հետ: Արդյունավետությունը կապված է դասընթացի նպատակների իրականացման, վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանի հետ:

¹ «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր)», 2010 թ. ՈԱԱԿ, Գլուխ 4, կետ 4.1. էջ 19: <http://www.anqa.am/>

Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացում և այդ գործընթացի շարունակական բարելավում:

Որակը նշանակում է սովորողների կրթական կարիքների լավագույնս բավարարում, ուսանողների, գործատուների, հասարակության և պետության պահանջներին համապատասխան վերջնարդյունքների ձեռքբերում:

Բուհի որակի ներքին ապահովման կառուցակարգերը թույլ են տալիս պարբերաբար գնահատել ԳՊՀ գործունեությունը և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը:

1.2.Որակի ապահովման համակարգը.

Որակի ապահովման համակարգն իրենից ներկայացնում է բուհի առաքելությանը, նպատակներին, գործունեությանը վերաբերող պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավման շարունակական միջոցառումների ամբողջություն: Որակի ապահովման համակարգը ձևավորվում է ներքին և արտաքին շահառուների և շահակիցների ակնկալիքների վերհանումից, որոնք հետագայում կիրառվում են բուհի գործունեությունը գնահատելիս: Այդ գնահատումը կատարվում է երկու ձևով՝ ինքնավերլուծություն և արտաքին գնահատում: Գնահատմանը հաջորդում է բարելավմանը միտված նոր գործողությունների պլանավորումը, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատումը:

Որակի ապահովման համակարգի սկզբունքները և նպատակներն են.

- 1) **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** որակի ապահովման համակարգի գործընթացները երաշխավորում են, որ ուսանողների շահերը բարձրագույն կրթության որակական չափորոշիչների պահպանման հարցում ապահովված են, նաև հրապարակային են դարձնում Համալսարանի կրթական ծառայությունների որակը:
- 2) **Վերահսկում.** բուհը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլ նաև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսներով հասնում է հնարավորինս բարձր որակի:
- 3) **Որակի բարելավում.** Համալսարանը քննարկումներ է անցկացնում և վերլուծություններ իրականացնում որակի ապահովման գործընթացի

արդյունավետության, որակի մշակույթի շարունակական ամրապնդման հիմնախնդիրների վերաբերյալ, մշակում նոր կառուցակարգեր այդ գործընթացները բարելավելու համար:

Որակի ապահովման համակարգը, ելնելով վերը նշված սկզբունքներից և նպատակներից, կրթության որակը ապահովելու համար իրականացնում է շարունակական բարելավման երեք հիմնական գործողություն՝

1. նպատակների և չափորոշիչների սահմանում,
2. գործունեության արժևորում ըստ այդ չափորոշիչների և
3. հետագա գործունեության բարելավում:

Դա ձևավորում է որակի համապարփակ կառավարման շարժիչ սկզբունքը՝ **Դեմինգի շրջափուլը** (ցիկլը՝ անգլերեն՝ Plan-Do-Check-Act), բառացի՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում՝ ՊԻԳԲ) գործընթացը², որի միջոցով բուհն իր և իր շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր չափորոշիչների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

1.3.Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները.

Բուհի որակի ապահովման համակարգերի զարգացման, որակի գնահատումն իրականացնելու, ընդհանուր որակի ապահովման չափանիշների շրջանակներ ձևավորելու գործում օգնում են Բարձրագույն կրթության որակի հավաստման ներքին և արտաքին համակարգերի սկզբունքները և ընթացակարգերը, որոնք մշակվել են **Եվրոպայի բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ)**:

Հայաստանի Հանրապետությունը, 2005 թվականի մայիսի 19-ին ստորագրելով Բերգենի կոմյունիկեն, Բարձրագույն կրթության ոլորտում սահմանեց և ընդունեց Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները (այսուհետ՝ ՈԱԵԶՈԻ): Չնայած ՈԱԵԶՈԻ-ը պարտադիր բնույթ չեն կրում, սակայն

² Դեմինգի շրջափուլ՝ ցիկլ, PDCA (անգլ.՝ Plan-Do-Check-Act), բառացի՝ պլանավորում-կատարում-ստուգում-գործում) կամ որոշումների ընդունման անընդհատ կրկնվող գործընթաց, որն օգտագործվում է որակի կառավարման բնագավառում: Դեմինգի շրջափուլը /ցիկլը/ հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու դեպի բարելավում տանող ճանապարհին: Այն հայտնի է նաև որպես՝ «Շյուհարտի ցիկլ», «PDCA ցիկլ» կամ «PDSA ցիկլ» անվանումներով: Դեմինգն այն անվանում է «Շյուհարտի ցիկլ», քանի որ իր մտահղացումը, ըստ էության, բխել է Շյուհարտի 1939 թվականին հրապարակված գրքից:

տրամադրում են միասնական կողմնորոշիչ շրջանակ, որն ուղղված է որակավորումների միջազգային ճանաչմանը:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ.

ՈԱԵՉՈՒ-ը Բաղկացած են երեք մասից՝

- 1) Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար:
- 2) Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համար:
- 3) Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար³:

Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը հաշվի են առնում որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությունը: Բերգենի կոմյունիկեում Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած երկրների կրթության նախարարները կոչ արեցին բոլոր բուհերին հիմնել այդպիսի համակարգ և համաձայնեցնել դրանք որակի արտաքին ապահովման ազգային համակարգի հետ: ՈԱԵՉՈՒ-ի առաջին մասում սահմանված սկզբունքները որակի ներքին ապահովման համակարգեր կառուցելու կարևոր հիմք են ձևավորում թե՛ բարձրագույն ուսումնական հաստատությունների, և թե՛ որակի ապահովման գործակալությունների համար: ՈԱԵՉՈՒ-ի առաջին և երրորդ մասերը կարևոր նշանակություն ունեն որակի ապահովման գործակալություններին ուղղորդելու գործում:

Ըստ ՈԱԵՉՈՒ-ի երկրորդ մասի՝ որակի արտաքին ապահովման գլխավոր բնութագրերն են՝

- 1) Որակի ապահովման գործընթացների նպատակներն ու խնդիրները պետք է սահմանվեն բոլոր պատասխանատուների կողմից (ներառյալ ՄՈՒՀ-երը) մինչև բուն գործընթացների և կիրառվելիք ընթացակարգերի մշակումը և պետք է հրապարակվեն:

³«Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր)», 2010 թ. ՈԱԱԿ, Գլուխ 4, կետ 4.1. էջ 7-11: <http://www.anqa.am/>

- 2) Որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունքում կայացրած յուրաքանչյուր պաշտոնական որոշում պետք է հիմքում ունենա նախօրոք հրապարակված չափանիշներ, որոնք պետք է կիրառվեն համահավասար:
- 3) Որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է պլանավորվեն՝ նպատակին հասնելը երաշխավորելու համար:
- 4) Ձեկույցները պետք է հրապարակված և շարադրված լինեն հասցեատեր ընթերցողի համար պարզ և հասկանալի ոճով: Ձեկույցում գետեղված ցանկացած որոշում՝ երաշխավորական կամ խորհրդատվական, պետք է ընկալելի լինի ընթերցողին:
- 5) Որակի ապահովման այն գործընթացները, որոնք պարունակում են որևէ միջոցառում իրականացնելու խորհրդատվություն կամ պահանջում են հաջորդող գործողությունների պլան, պետք է ունենան գործողությունների նախանշված ընթացակարգ, որը պետք է իրականացվի համապատասխան կերպով:
- 6) ՄՈՒՀ-երի կամ կրթական ծրագրերի որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է կատարվեն շրջափուլային (ցիկլիկ) եղանակով: Շրջափուլի տևողությունը և վերանայման ընթացակարգերը պետք է հստակ սահմանվեն և նախապես հրապարակվեն:
- 7) Որակի ապահովման գործակալությունները պետք է ժամանակ առ ժամանակ հրապարակեն ամփոփ զեկույցներ, որոնք պարունակում են նրանց կողմից իրականացված դիտարկումների և գնահատումների ընդհանուր տվյալների նկարագրությունն ու վերլուծությունը:

1.4. Որակի ներքին ապահովում.

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների նպատակն է բուհին օժանդակել ոչ միայն որակի արտաքին ապահովման ընթացակարգերը մշակելու և սահմանելու հարցում, այլև աջակցեն՝ ստեղծելու որակի ապահովման ներքին համակարգ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան:

Բարձրագույն ուսումնական հաստատության որակի ներքին ապահովման եվրոպական և տեղական չափորոշիչներն ու ուղենիշները վերաբերում են հետևյալ

հիմնական տիրույթներին՝

- 1) **Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ:** Հաստատությունն իր ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակի քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Բուհը պետք է հետևողականորեն նպաստի իր աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար պետք է իրագործել որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Բուհը պետք է նաև կարևորի ուսանողների և այլ շահակիցների դերը:
- 2) **Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում:** Հաստատությունը պետք է ունենա ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:
- 3) **Ուսանողների ուսումնառության գնահատում:** Ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:
- 4) **Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում:** Հաստատությունը պետք է ունենա որակյալ և բանիմաց անձնակազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի վերջնական զեկույցում:
- 5) **Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին:** Հաստատությունը պետք է հավաստի, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:
- 6) **Տեղեկատվական համակարգեր:** Հաստատությունը պետք է հավաստի, որ իր ուսումնական ծրագրերի և այլ գործառնությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում է համապատասխան տեղեկատվություն:
- 7) **Հրապարակայնություն:** Հաստատությունը պետք է իր առաջարկած ծրագրերի

և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակի ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ տեղեկատվություն⁴:

Այս յոթ տիրույթից յուրաքանչյուրի համար բուհի Որակի ապահովման բաժինը սահմանում է որոշակի չափանիշներ և չափորոշիչներ: Սահմանված չափանիշները բուհի կողմից ընկալվում են որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ, որոնց նպատակն է հավաստել, որ **բուհը հետամուտ է հետևյալ հարցերի լուծմանը.**

- 1) Արդյո՞ք ունի որակը կարևորող մշակույթ և այն ձևավորող ընթացակարգեր, որոնք գործում են բուհի բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
- 2) Արդյո՞ք պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը,
- 3) Արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանելու նպատակով,
- 4) Արդյո՞ք մշտադիտարկում են սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,
- 5) Արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կվերացնեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները,
- 6) Արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է բուհի և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն:

1.5.Որակի արտաքին գնահատում.

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման գործընթացում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը,

⁴ «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր)», 2010 թ. ՈԱԱԿ, Գլուխ 4, կետ 4.1. էջ 47: <http://www.anqa.am/>

որի նպատակ է կրթության որակի բարձրացումը, իրականացվող գործընթացների գնահատման թափանցիկության ապահովումը: Ուսուցման որակի գնահատման ու ապահովման համակարգում էական դեր է հատկացվում ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացներին՝ որպես համալսարանի գործունեության արդյունավետության ապահովման և որակի բարձրացման կարևորագույն միջոցի:

Որակի արտաքին ապահովման գործընթացն ընթանում է երեք հիմնական փուլերով.

1. Որակի արտաքին ապահովման գործընթացի ենթակա կառույցի ինքնագնահատում,
2. արտաքին փորձագետների այցելություն,
3. երկու փուլերի արդյունքում կայացված որոշում և որոշման հրապարակում:

Հայաստանի Հանրապետությունում որպես արտաքին հավատարմագրում իրականացնող կազմակերպություն հանդես է գալիս ՈԱԱԿ-ը: ՈԱԱԿ-ը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման գործընթացն իրականացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման միջոցով: ՈԱԱԿ-ը միակ անկախ կառույցն է ՀՀ-ում, որն իրավասու է իրականացնել բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները, սահմանել այն հաստատություններն ու մասնագիտությունների կրթական ծրագրերը, որոնք բավարարում են պետական կրթական չափորոշիչների և հավատարմագրման չափանիշների պահանջներին, թարմացնել հավատարմագրման չափանիշները, չափորոշիչները և ընթացակարգերը, առաջարկություններ ներկայացնել լրամշակման վերաբերյալ:

Հավատարմագրման ընթացակարգ.

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլով.

1. **Ուսումնական հաստատության ինքնավերլուծություն:** Հավատարմագրման գործընթացը ենթադրում է հաստատությունների կողմից՝ իրենց առաքելության, նպատակների, խնդիրների, թերացումների և ձեռքբերումների մանրամասն ուսումնասիրություն:
2. **Արտաքին գնահատում անկախ փորձագետների խմբի կողմից:** Փորձագիտական այցի հիմնական նպատակն է պարզել ինքնավերլուծության

մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեությանը ծանոթանալու նպատակով:

- 3. Հավատարմագրող կազմակերպության կողմից վերջնական փորձագիտական զեկույցի պատրաստում և որոշման կայացում:**

ԳԼՈՒԽ II. ԳՊՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


2.1. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակները.

- ✓ երաշխավորել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ԳՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին,
- ✓ նպաստել Համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության հետևողական իրականացմանը, որակի մշակույթի ամրապնդմանը և շարունակական զարգացմանը,
- ✓ աջակցել որակի կառավարման, ապահովման և բարելավման գործընթացներում շահակիցների դերակատարության բարձրացմանը:

2.2. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները.

- ✓ նպաստել ՄԿԾ-ների մշակման, քննարկման, հաստատման, մշտադիտարման, վերանայման և բարելավման ընթացակարգերի կիրառման որակի ապահովմանը,
- ✓ ներդաշնակել Համալսարանի որակի ապահովման տարբեր ոլորտների գործունեության և գործառույթների իրականացման գործընթացները,
- ✓ որակի ապահովման ճկուն մեխանիզմների կիրառմամբ նպաստել Համալսարանում ԵԲԿՏ որակի չափանիշների ներդրմանը,
- ✓ ամրապնդել կապերը գործընկեր ՀՀ և եվրոպական բուհերի ՈԱ բաժինների, այլ ստորաբաժանումների, ՀՀ ՈԱԱԿ-ի հետ,
- ✓ բացահայտել ԳՊՀ որակի ապահովման ներքին համակարգի ուժեղ և թույլ կողմերը, մշակել միջնաժամկետ և երկարաժամկետ բարելավման ծրագրեր,
- ✓ ԳՊՀ ՈԱ բոլոր գործընթացների համար ապահովել պլանավորման, իրականացման, գնահատման կամ ստուգման, բարելավման գործիքները՝ «ՊԻԳԲ» կամ «Ղեմինգի շրջափուլը /ցիկլը/», որն իր հերթին կապահովի հետադարձ կապեր (տե՛ս Գծապատկեր 1):

ՊԻԳԲ շրջափուլ



Պլանավորում.

- ✓ ներքին շահառուների և արտաքին շահակիցների կարիքների վերհանում, ուսումնասիրում,
- ✓ կրթական գործունեությունը կարգավորող պատշաճ ընթացակարգերի և կանոնակարգերի ստեղծում,
- ✓ ԳՊՀ որակի ապահովման գործընթացների ծրագրում, հետադարձ կապի մեխանիզմների մշակում,
- ✓ ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների հստակ գործառույթների և աշխատանքային նկարագրերի սահմանում:
- ✓ ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ցուցիչների սահմանում,
- ✓ ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների գործունեության որակի արդյունավետության ցուցիչների մշակում,

Իրականացում.

- ✓ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ կազմի հավաքագրում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում,

- ✓ անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների՝ լաբորատորիաների, համակարգչային, մասնագիտական լսարանների, անհրաժեշտ սարքավորումների, ուսումնամեթոդական և տեղեկատվական ռեսուրսների ապահովում,
- ✓ փաստաթղթաշրջանառության պատշաճ կազմակերպում,
- ✓ ՈԱ համապատասխան վերլուծությունների կատարում:


Գնահատում.

- ✓ կրթական ծառայությունների մատուցման ընթացքի վերահսկում,
- ✓ ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում բավարարվածության հարցումների անցկացում,
- ✓ մշտադիտարկում, հաշվետվությունների ներկայացում, վերլուծությունների հրապարակում:

Բարելավում.

- ✓ ռազմավարական ուղղություններով գործողությունների իրականացման արդյունավետության ուսումնասիրություն, մշտադիտարկում, գնահատում,
- ✓ բարելավման նոր հայեցակարգերի մշակում:

ԳՊՀ ՌԾ-ի իրականացման գործընթացի նկատմամբ Համալսարանի կառավարման մարմինների, ներքին և արտաքին շահառուների կողմից կիրառվում են շարունակական վերահսկողության, մշտադիտարկման, գնահատման, արդյունքների վերլուծության և բարելավման կառուցակարգեր՝ ՌԾ-ի իրականացման գործընթացի որակի ապահովման պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլին համապատասխան (տե՛ս Գծապատկեր 2):



2.3.ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները և դրանց գործառույթները.

Կրթության որակի քաղաքականության մշակման, իրականացման, որակի կառավարման, վերահսկողության և բարելավման, Համալսարանում որակի մշակույթի ձևավորման, որակի քաղաքականության և համադրական վերլուծության իրականացման համար պատասխանատվություն են կրում ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը, գիտական խորհուրդը, ռեկտորը, պրոռեկտորները, որակի ապահովման բաժինը, ակադեմիական քաղաքականության բաժինը, ֆակուլտետների ղեկանները, որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովները, կրթական ծրագրերի ղեկավարները (ամբիոնների վարիչները), Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումները (տե՛ս գծապատկեր 3):

✓ **Համալսարանի հոգաբարձուների խորհուրդն** իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) հաստատում է կրթության որակի ապահովման բուհական քաղաքականությունը, դրա շարունակական իրականացման ռազմավարությունը,

բ) Համալսարանի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում և հաստատում է ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացների արդյունքները, երաշխավորություններ ու առաջարկություններ է ներկայացնում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ բարելավման ուղիների մշակման համար:

✓ **Համալսարանի գիտական խորհուրդը** իրականացնում է կրթության որակի ապահովման ներբուհական գործընթացների արդյունքների և ԳՊՀ որակի ապահովման բաժնի եզրակացությունների քննարկումն ու հաստատումը:

✓ **Համալսարանի ռեկտորը** ղեկավարում է Համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը, ապահովում ՄԿԾ-ների որակի ապահովման համակարգի ներդաշնակ գործունեությունը և դրա փոխգործակցությունը բուհական կառավարման այլ համակարգերի հետ:

✓ **Համալսարանի պրոռեկտորն** իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) ապահովում է գործառնական կապերն ու փոխգործակցությունը ներգրավված հիմնական կառույցների միջև, մասնավորապես ֆակուլտետների, որակի

ապահովման բաժնի, ակադեմիական քաղաքականության բաժնի, ամբիոնների և բուհական այլ՝ առնչվող ստորաբաժանումների միջև,

բ) համակարգում է կրթության որակի ապահովման/գնահատման ընթացակարգերի, ՄԿԾ-ների բուհական չափորոշիչների ու պահանջների, կրթության որակի ապահովմանն առնչվող կանոնակարգային և նորմատիվ այլ փաստաթղթերի պատրաստման և իրականացման գործընթացները,

գ) ապահովում է կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ, նյութատեխնիկական հիմքեր:

✓ **Որակի ապահովման բաժինն** իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում ՈԱ գործառույթների ու ընթացակարգերի իրականացման անհրաժեշտ աջակցության ապահովում և մշտադիտարկում,

բ) ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերի մշակում և ներդրում,

գ) ԳՊՀ ուսանողների, դասախոսների կրթական միջավայրից բավարարվածության, ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողի, շրջանավարտի, նրանց ծնողի շրջանում բավարարվածության, գործատուի կողմից ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական կարողությունների գնահատման գործիքակազմի կիրառում,

դ) ԳՊՀ ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատման, ինքնավերլուծության և ինքնագնահատման աշխատանքների կատարելագործում և համակարգում,

ե) դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմի և ընթացակարգերի մշակում և իրականացում,

զ) ԳՊՀ գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների, ՈԱ ֆակուլտետային պատասխանատուների հետ համագործակցություն և նրանց աշխատանքներին աջակցում,

է) որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը նպաստում,

ը) ԳՊՀ-ում ՈԱ միտված գործողությունների համակարգում:

✓ **Ակադեմիական քաղաքականության բաժինն** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) համակագում և վերահսկում է ուսումնական ստորաբաժանումներում ՄԿԾ-ների որակի ապահովման գործառնությունների և ընթացակարգերի իրականացումը,

բ) կազմակերպում է Համալսարանի ինքնավերլուծության, ինքնագնահատման գործընթացները և հաջորդող գործողությունների ծրագրումն ու վերահսկումը:

✓ **Ֆակուլտետի ղեկանն** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) որակի ներքին ապահովման ընթացակարգերին համապատասխան պատասխանատու է ֆակուլտետում կրթության որակի ապահովման և վերահսկման բոլոր գործառնությունների կազմակերպման և իրականացման համար

բ) ֆակուլտետի շրջանակում ապահովում է Համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության իրականացումը,

գ) կազմակերպում է ֆակուլտետի ինքնավերլուծությունը՝ համալսարանի ինքնագնահատման գործընթացի շրջանակներում:

✓ **Մասնագիտական կրթական ծրագրի ղեկավարն** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) կազմակերպում է ՄԿԾ-ի մշակման, իրականացման, մշտադիտարկման, պարբերական վերանայման ու կատարելագործման գործընթացները,

բ) պլանավորում է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, մշակում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակներին ներկայացվող պահանջները, ուսումնառության, ակադեմիական խորհրդատվական ծառայությունները՝ նախապես սահմանված չափորոշիչներին համապատասխան:

✓ **Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուն** իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) վերահսկում է ֆակուլտետի ՄԿԾ-ների պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը,

բ) հետևում է ՄԿԾ-ների պատշաճ ռեսուրսային և մեթոդական ապահովվածությանը,

գ) պատասխանատու է ֆակուլտետում ՄԿԾ-ների որակի ապահովման և ներքին վերահսկման, ինչպես նաև Համալսարանի մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման համար:

✓ **Ուսանողներն** իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա) ընդգրկվում են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին, ապա և շրջանավարտների՝ Համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության հարցումներին,

բ) ընդգրկվում են Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետային խորհուրդների կազմերում, մասնակցում որոշումների կայացմանը,

գ) մասնակցում են Համալսարանի ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,

դ) մասնակցում են համապատասխան ֆակուլտետների ինքնագնահատման, ինքնավերլուծության գործընթացներին,

ե) ընդգրկվում են Համալսարանում ակադեմիական անագնավության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում,

զ) ընդգրկվում են ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման հանձնաժողովի կազմում:

✓ **Արտաքին գնահատողները (փորձագետները, շրջանավարտները, գործատուները)** իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա) կատարում են ՄԿԾ-ների, ուսումնական պլանների արտաքին փորձաքննություն,

բ) ընդգրկվում են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում,

գ) Համալսարանի նախաձեռնությամբ կարող են մասնակցել ուսանողների գիտելիքների ընթացիկ, կիսամյակային և ամփոփիչ գնահատման գործընթացներին,

դ) մասնակցում են ՄԿԾ-ների ելքային արդյունքներից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին:

ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները



ԳԼՈՒԽ III. ԳՊՀ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1. Որակի ներքին ապահովման ընթացակարգ.

Գավառի պետական համալսարանում որպես առաջնահերթություն հռչակված են կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, գիտահետազոտական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ձևավորումը:

Համալսարանի գործունեության առանցքային ուղղությունն է որակի ներքին ապահովումը, որը բնութագրվում է որպես համապատասխանություն բուհի առաքելությանը և նպատակին:

Համալսարանում կրթության որակի գնահատման, մշտադիտարկման և բարելավման նպատակով բուհում կատարվեց կառուցվածքային փոփոխություն՝ ԳՊՀ կառավարման խորհրդի որոշմամբ 2017թ.-ին ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության /այժմ՝ Բաժնի/ կազմից հանվեց որակի ապահովման Բաժինը (այսուհետ՝ ՈԱ Բաժին)՝ դառնալով ռեկտորի ենթակայության ներքո գործող առանձին կառուցվածքային ստորաբաժանում:

Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգված են, սահմանված է պատասխանատուների իրավասությունների և պարտականությունների, գործառույթների շրջանակը, ինչպես նաև պահանջվող իրազեկությունները:

Համալսարանում շարունակական աշխատանքներ են տարվում կրթության որակի կառավարման կառուցակարգերի բարելավման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգերի բարեփոխման նպատակով:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի վերահսկման նպատակով մշակվել, ընդունվել, փոփոխվել և լրամշակվել են մի շարք կանոնակարգեր.

1. Գավառի պետական համալսարանի 2017-2022 թվականների ռազմավարական ծրագիր /**հաստատված է 2017թ. /**,
2. Գավառի պետական համալսարանի որակի ապահովման Բաժնի գործունեության կանոնակարգ (փոփոխություններով) /**ընդունված էր 17.08.2017թ. , փոփոխությունները հաստատված են 21. 03. 2021թ. /**,
3. Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման



- ձեռնարկ /**հաստատված է 21. 03. 2021թ. , նախորդին ընդունված էր՝ 07.02.2015թ./**,
4. Գավառի պետական համալսարանում ուսուցանվող մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ **/հաստատված է 30. 04. 2010թ. /**,
 5. Գավառի պետական համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման ընթացակարգ **/հաստատված է 26. 05. 2010թ. /**,
 6. Գավառի պետական համալսարանում սովորողների ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականության մշակման և իրականացման ընթացակարգ**/հաստատված է 26. 05. 2010թ. /**,
 7. Գավառի պետական համալսարանում ուսուցման մեթոդների գնահատման և բարելավման ընթացակարգ **/հաստատված է 26. 05. 2010թ. /**,
 8. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ (փոփոխություններով) **/հաստատված է 07. 12. 2019թ. , նախորդին ընդունված էր՝ 28.04.2012թ./**
 9. Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (փոփոխություններով) **/հաստատված է 07. 12. 2019թ. , նախորդին ընդունված էր՝ 25.02.2012թ. /**,
 10. Գավառի պետական համալսարանի կողմից առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգ **/հաստատված է 25. 02. 2015թ. /**,
 11. Գավառի պետական համալսարանում դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգ **/հաստատված է 27. 02. 2021թ. , նախորդին ընդունված էր՝ 28.04.2012թ. /**,
 12. այլ ակտեր:


3.2. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, գնահատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում:

Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ նախագծման և մշակման համար կարևոր նշանակություն ունեն կրթական ծրագրի նպատակների սահմանումը և կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Սա ևս մեկ երաշխիք է որակյալ կրթական ծառայությունների մատուցման և կրթության որակի շարունակական ապահովման համար: ՄԿԾ-ի վերջնարդյունքները նախապես սահմանված կրթական ձեռքբերումներ են, որոնք ընդհանուր կերպով ներկայացնում են, թե կրթական ծրագրի ավարտին ուսանողներն ինչ նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կունենան: ՄԿԾ-ն հաջողությամբ ավարտելու դեպքում ուսանողները պետք է ձեռք բերեն կրթական ծրագրով սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները: ՄԿԾ-ի որակի ապահովմանն ուղղված գործողությունների հիմքում ընկած է որակավորումների համաեվրոպական շրջանակը, որի հիման վրա մշակվել են Որակավորումների ազգային շրջանակները: Որակավորումների համաեվրոպական շրջանակը և որակավորումների ազգային շրջանակը սահմանում է կրթական հաստատությունների կողմից սեփական կրթական ծրագրերի վերանայում, ինչի արդյունքում պետք է հստակ սահմանվեն առկա կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ինչպես նաև վերանայվեն այդ կրթական ծրագրերի ներքո գործող առարկայական ծրագրերի կրթական վերջնարդյունքները: Կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնական նպատակն ակնկալվող գիտելիքի ծավալի ու բովանդակության չափելիության ապահովումն է, որն այս մեթոդաբանությամբ թույլ է տալիս բացառել բոլոր վերացական և ոչ չափելի պահանջներն ու սահմանումները:

Կրթական վերջնարդյունքները ձևակերպելու համար ԳՊՀ-ն կիրառում է դեռևս 1959 թվականին Բենջամին Բլումի կողմից ներկայացված «Կրթական նպատակների տաքսոնոմիա» անունով վեց մակարդակներից բաղկացած բրգաձև աստիճանական գործիքը (տե՛ս Գծապատկեր 4, 5, 6):

Կրթական նպատակների տաքսոնոմիա





Կրթական ծրագրերի վերջնարդյունքների նկարագրության համար առանցքային նշանակություն ունի չափողականության և գնահատման ենթարկվող նպատակների մշակումը: Բլումի տաքսոնոմիայի համաձայն՝ ուսումնառության գործընթացում իմացության դրսևորումները դասակարգվում են ըստ բարդության մակարդակների և յուրաքանչյուր մակարդակի նկարագրման համար օգտագործվում է մշակված բայացանկ:

Դասական տարբերակում Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական խումբը ներկայացնում է վեց մակարդակ՝ **գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում և գնահատում**:

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների որակի ապահովման համակարգը սահմանում է.


- 1) հանրության շրջանում նոր կրթական ծրագրի իրականացման կարիքի ուսումնասիրում,
- 2) ծրագրերի պլանավորում,
- 3) նոր կրթական ծրագրի գործունեության արտոնման (լիցենզիայի) ստացում,
- 4) ծրագրերի մշակում և փաստաթղթային փաթեթի կազմում,
- 5) ծրագրերի ներքին փորձաքննություն,

6) ծրագրերի իրականացման վերահսկում,

7) ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում (տե՛ս Գծապատկեր 7):

Գծապատկեր 7.

Մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգը




Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության որակի վերահսկման, ինչպես նաև իրականացվող գործընթացների արդյունավետության ապահովման ուղենիշ է ՄԿԾ-ների որակի վերաբերյալ բնութագրիչ տվյալների բազայի ստեղծումը, գնահատումը, բարելավումը, ապա այդ գործընթացն իրականացնելիս կարևոր են կրթական ծրագրի որակի վերաբերյալ հաշվետվությունները, ուսանողների (տե՛ս Հավելված 2, 3, 4, 14), շրջանավարտների (տե՛ս Հավելված 6), դասախոսների (տե՛ս Հավելված 7, 8, 9, 10, 11), գործատուների (տե՛ս Հավելված 5), շրջանում անցկացված անանուն հարցումների տվյալների ուսումնասիրությունները, ամփոփիչ ատեստավորող հանձնաժողովների հաշվետվությունները (տե՛ս Հավելված 13), դասալսումները (տե՛ս Հավելված 12), ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ քննարկումների արդյունքները, կրթական ծրագրերի վերաբերյալ գործատուների, արտաքին և ներքին շահառուների և շահակիցների կարծիքները, տարբեր պետությունների առաջատար բուհերում իրականացվող համանման ՄԿԾ-ների բնութագրերի ուսումնասիրում

(բենչմարքինգը) և դրանց համադրման ճանապարհով իրականացված վերլուծությունները և նոր ռազմավարական ուղղությունների մշակումները, նրանց արդյունվետության ուսումնասիրությունները, որակի ներքին ապահովման շարունակական բարեփոխումներն ու բարելավումները, որոնք կարող են հիմք հանդիսանալ Համալսարանի ռազմավարական ծրագրի բարելավման համար (տե՛ս Գծապատկեր 8):

Գծապատկեր 8.


**Մասնագիտական կրթական ծրագրի շարունակական բարեփոխումը և բարելավումը՝
որպես Համալսարանի ՌԾ-ի բարեփոխման բաղադրիչ**



3.3. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին:

ԳՊՀ-ն, ելնելով ՌԾ-ում ամրագրված առաքելությունից, ռազմավարական նպատակներից և առաջնորդվելով եվրոպական չափորոշչի ուղենիշներով, մշակում է ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների պլանավորման, գնահատման և բարելավման իր ռազմավարությունը (տե՛ս Գծապատկեր 9), որը որակի ապահովման և շարունակական բարելավման ԳՊՀ ընդհանուր քաղաքականության բաղադրիչն է:

**Ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների
պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում**



3.4.Ուսանողների ուսումնառության գնահատում:


ԳՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- ✓ ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր,
- ✓ ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել ախտորոշիչ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապի ապահովման գործիք՝ դասավանդման և ուսումնառության

շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունավետ գնահատման հիմնական քայլերը (տե՛ս Գծապատկեր 10), գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

Գծապատկեր 10.

Դասընթացի արդյունավետ գնահատման հիմնական քայլերը



3.5. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովում

ԳՊՀ-ում դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրումը, ընտրությունը, մասնագիտական հմտությունների զարգացումը, նրանց բավարարվածության գնահատումը, ուսումնասիրումը և շարունակական բարելավումն առաջնահերթ նշանակություն ունեն (տե՛ս Գծապատկեր 11):


ԳՊՀ-ում վերը նշված գործընթացներն իրականացնելիս հիմք են հանդիսանում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտը կարգավորող օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներն ու ԳՊՀ ստորև նշված կանոնակարգերը.

1. Գավառի պետական համալսարանի 2017-2022 թվականների ռազմավարական ծրագիր

2. Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (փոփոխություններով)
3. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձեւավորման եւ խրախուսման (փոփոխություններով) կանոնակարգ
4. Գավառի պետական համալսարանի դասախոսներին պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունման կարգ
5. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ
6. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգ
7. Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգ
8. Գավառի պետական համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմունքներ:

Գծապատկեր 11.

Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովման հիմնական փուլերը



3.6.Տեղեկատվական համակարգեր:


ՄԿԾ-ների որակի, դրանցում սահմանված ելքային արդյունքների, գործունեության տարբեր ուղղությունների, նպատակների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, Համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ հանրությանը լիարժեք և պատշաճ ձևով իրազեկելու համար ԳՊՀ-ն համացանցային տիրույթում ներկայացված է պաշտոնական կայքի (www.gsu.am), ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի (www.learn.gsu.am), ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի (www.library.gsu.am), Համալսարանի միջազգային համագործակցության (www.international.gsu.am), ուսանողական (www.student.gsu.am), Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի (www.career.gsu.am) կայքերի, youtube պաշտոնական տեսահարթակի (www.youtube.com/user/gsuadmin), սոցիալական ցանցերի (facebook, twitter) միջոցով, Համալսարանի հակակոռուպցիոն բլոգով:

3.7. Հրապարակայնություն:

Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը ներառում է բուհում կրթական գործընթացի մասին լիարժեք իրազեկումը, տեղեկատվության տրամադրումը մասնագիտությունների, Համալսարանի կառուցվածքի և գործառնությունների, ուսման վարձերի և տրամադրվող զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, տեղեկատվություն ստանալու բոլոր հնարավոր աղբյուրների, բուհի միջազգային համագործակցության և այլ ծրագրերի վերաբերյալ: Հասարակությունը պարբերաբար իրազեկվում է Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների, կրթության որակն ապահովող կառուցակարգերի, շնորհվող կրթական աստիճանների, արտերկրի գործընկեր բուհերի, շահառուներին հետաքրքրող այլ հարցերի մասին: Ներբուհական գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը՝ ԳՊՀ կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, այլ ներքին իրավական ակտերը, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների արձանագրություններն ու որոշումները հասանելի են շահառուներին թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Համալսարանի համացանցային կայքի, էլեկտրոնային փոստի միջոցով ապահովվում է ակտիվ հետադարձ կապ ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ (տե՛ս Գծապատկեր 12):

Գծապատկեր 12.

Հետադարձ կապի ապահովման միջոցով կրթության որակի բարելավում



Աշակերտների մասնագիտական կողմնորոշման բացահայտման

Միբելի՝ աշակերտ, սույն հարցումն իրականացվում է Գավառի պետական համալսարանի կողմից և Ձեր մասնագիտական կողմնորոշման բացահայտման նպատակն ունի: Խնդրում ենք հարցաթերթիկին ծանոթանալուց հետո անկեղծորեն պատասխանել ստորև ներկայացվող հարցերին:

1) Ո՞ր դպրոցում և դասարանում եք սովորում

2) Ցանկություն ունե՞ք ստանալու բարձրագույն մասնագիտական կրթություն.

☐ այո, ինչու՞ _____

☐ ոչ _____

3) Ի՞նչ մասնագիտություն եք ընտրելու

4) Ո՞ր բուհն եք դիմելու

5) Որտեղի՞ց եք տեղեկացել տվյալ բուհի տվյալ մասնագիտության մասին

6) Գավառի պետական համալսարանի մասին ի՞նչ գիտեք և որտեղի՞ց

7) Գիտե՞ք արդյոք, որ Գավառի պետական համալսարանում կան անվճար տեղեր

☐ այո

☐ ոչ

8) Գիտե՞ք, որ Գավառի պետական համալսարանի ուսանողները հնարավորություն ունեն իրենց կրթությունը շարունակելու եվրոպական առաջատար բուհերում

☐ այո

☐ ոչ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

« _____ » 202 թ.

ԳՊՀ որակի ապահովման բաժին

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ**

Հարգելի՛ ուսանող, ողջունում ենք Ձեզ և խիստ կարևորում Ձեր կարծիքը Գավառի պետական համալսարանում /ԳՊՀ/ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման որակի, ուսումնառության արդյունքների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության, դասավանդման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներում:

Ուստի, խնդրում ենք մասնակցել անանուն հարցմանը և ազնվորեն պատասխանել հարցերին, քանի որ ԳՊՀ-ում կրթության որակի շարունակական բարելավումը կախված է Ձեր՝ որպես հիմնական շահառուի, պատասխաններից:

Ընդհանուր տեղեկություններ

- 1.1. Ֆակուլտետը՝
- 1.2. Կրթական աստիճանը՝
- 1.3. Մասնագիտությունը՝
- 1.4. Կուրսը՝

**2. ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞ՒՄ Է ԱՐԴՅՈՔ ԳՊՀ-Ի ԿՈՂՄԻՑ
ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

2.1. Ուսուցանվող մասնագիտությունների մասին

- Այո
- Ոչ

2.2. Մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների և պայմանների մասին

- Այո
- Ոչ

2.3. Ուսումնական ռեսուրսների, ուսանողներին մատուցվող ուսումնաօժանդակ ծառայությունների մասին

- Այո
- Ոչ

2.4 Արդյունավետ ուսուցմանը նպաստող խորհրդատվական ծառայությունների մասին

- Այո
- Ոչ

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

3.1. Հաճա՞խ եք օգտվում ԳՊՀ-ի էլեկտրոնային ուսուցման «learn.gsu.am» համակարգից

- Այո
- Ոչ

3.2. Ձեզ անհրաժեշտ ուսումնական նյութերը ԳՊՀ-ի էլեկտրոնային ուսուցման «learn.gsu.am» համակարգում առկա՞ են

- Այո
- Ոչ

Եթե ոչ, ապա նշե՛ք, թե ո՞ր դասընթացի նյութերն են բացակայում

3.3. Հաճա՞խ եք օգտվում ԳՊՀ-ի էլեկտրոնային «library.gsu.am» գրադարանից

- Այո
- Ոչ

3.4. Ձեզ անհրաժեշտ էլեկտրոնային գրականությունը գտնու՞մ եք արդյոք ԳՊՀ-ի էլեկտրոնային «library.gsu.am» գրադարանում

- Այո
- Ոչ

3.5. ԳՊՀ-ում առկա նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազան արդյո՞ք բավարար եք համարում Ձեր կրթական գործընթացի կազմակերպման համար

- Այո
- Ոչ

Եթե ոչ, ապա նշե՛ք, թե ինչի՞ կարիք ունեք

3.6. Օգտվո՞ւմ եք ԳՊՀ-ի գրադարանից

- Այո
- Ոչ

Եթե այո, ապա նշե՛ք՝ գո՞հ եք, թե՞ ոչ

3.7. Օգտվո՞ւմ եք ԳՊՀ-ում համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ծառայություններից

- Այո
- Ոչ

Եթե այո, ապա նշե՞ք զո՞հ եք, թե՞ ոչ

3.8. Ձեր ուսումնական խորհրդատուների աշխատանքից զո՞հ եք

- Այո
- Ոչ

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

**4. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ**

Խնդրում ենք գնահատել ԳՊՀ վարչական, ուսումնաօժանդակ կազմի և ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքը.

4.1. Ամբիոնի

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.2. Դեկանատի

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.3. Ռեկտորատի

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.4. Ակադեմիական քաղաքականության բաժին

- Գերագանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը.

4.5. Որակի ապահովման բաժնի

- Գերագանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.6. Հաշվապահություն

- Գերագանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.7. Արխիվ.

- Գերագանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.8. Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.

- Գերագանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.9. Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն.

- Գերագանց

- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

4.10. Ուսանողական ինքնակառավարման մարմինների

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար

Հստակեցրե՛ք Ձեր պատասխանը

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

5.1. ԳՊՀ ուսանողների իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ ուղեցույցում հստակ սահմանվա՞ծ են Ձեր իրավունքներն ու պարտականությունները.

- Այո
- Ոչ

Եթե ոչ, ապա ներկայացրեք Ձեր առաջարկությունները

5.2. ԳՊՀ ուսանողական խորհրդի կանոնադրությունում հստակ սահմանվա՞ծ են խորհրդի գործառույթներն ու իրավասությունները.

- Այո
- Ոչ

Եթե ոչ, ապա ներկայացրեք Ձեր առաջարկությունները

5.3. Տեղյա՞կ եք, որ ԳՊՀ-ում առկա է ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգ

- Այո
- Ոչ

5.4. Երբե՞նիցե Ձեր բողոքը բարձրաձայնե՞լ եք ԳՊՀ ֆակուլտետային կամ համալսարանական բողոքարկման հանձնաժողովի նիստերում:

- Այո
- Ոչ

5.5. ԳՊՀ ֆակուլտետային կամ համալսարանական բողոքարկման հանձնաժողովը քավարարել է Ձեր պահանջը

- Այո
- Ոչ

Եթե ոչ, ապա ներկայացրեք Ձեր բողոքը կամ պահանջը

6. Խնդրում ենք նշել, մասնակցո՞ւմ եք ԳՊՀ կառավարման գործընթացին

- Այո
- Ոչ

Եթե այո, ապա ներկայացրեք Ձեր մասնակցության գործընթացը

7. Խնդրում ենք նշել երեք առավելություն, որը, Ձեր կարծիքով, բնորոշ է ԳՊՀ-ին:

8. Խնդրում ենք նշել երեք թերություն կամ խնդիր, որը նկատել էք ԳՊՀ-ում ուսումնառության ընթացքում:

9. Խնդրում ենք Ձեր առաջարկությունները թերությունների վերացման և բարելավման համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

« » 202 թ.

ԳՊՀ որակի ապահովման բաժին

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ**

Հարգելի՛ ուսանող, ողջունում ենք Ձեզ և խիստ կարևորում Ձեր կարծիքը Գավառի պետական համալսարանում /ԳՊՀ/ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման որակի, ուսումնառության արդյունքների, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գործունեության, դասավանդման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներում:

Ուստի, խնդրում ենք մասնակցել անանուն հարցմանը և ազնվորեն պատասխանել հարցերին, քանի որ ԳՊՀ-ում կրթության որակի շարունակական բարելավումը կախված է Ձեր՝ որպես հիմնական շահառուի, պատասխաններից:

